Это "официальное" положение армян Краснодарского края может быть охарактеризовано и с другой стороны, учитывая не только формальное наличие тех или иных армянских учреждений в регионе, но и эффективность их функционирования в ракурсе угрозы ассимиляционных процессов среди армян края и сохранности их основных культурных парадигм и их ретрансляции, таких как мобилизация, язык, доступность информации, образование. В этом направлении исследования, к сожалению, почти не проводились, и для представления некоторых вопросов мы провели опрос 350 респондентов, разделенных по возрастным и социальным стратам примерно пропорционально социально-культурному делению армянской общности Краснодарского края³⁶. Эти предварительные материалы, конечно, не могут дать однозначных и верных ответов по интересующей нас теме, но помогут прийти к некоторым предварительным выводам.

Не смотря на официальные точки зрения об успешной интеграции армянских институтов в региональное сообщество, некоторые факты позволяют нам в этом сильно усомниться. Так из опрошенных 350 респондентов о своей связи или знакомстве с деятельностью армянских ОО заявили лишь 24 (7%). Притом, что опрос велся среди армян так или иначе находящихся в сфере непосредственной деятельности ОО в регионах³⁷. Этот казус точно подтверждает и количество армян, пришедших на митинги 24 апреля 2008 г. по случаю Дня памяти жертв Геноцида армян. Самые крупные мероприятия 24 апреля были проведены в Сочи и Краснодаре, где присутствовало от 500 до 1000 человек. По всему краю, насколько нам известно, в мероприятиях приняли участие не более 7-8 000 человек, то есть всего 2% армян края. Отметим также, что в 2008 г. на этих мероприятиях присутствовало самое большое количество населения за последние 5 лет³⁸.

Поэтому есть все основания говорить о слабой мобилизации армян Краснодарского края, не смотря на разветвленную сеть различных национальных ОО. Деятельность же этих ОО может быть охарактеризована как во многом формальная и неэффективная, если всего 7% армян слышало о них или принимало участие в их акциях, даже с учетом погрешностей. Слабость и неорганизованность армянской общины края подтверждают и другие факты. Например, антиармянские или провокационные высказывания многих официальных и высокопоставленных лиц в крае о "засилье армян", о "коренных и некоренных армянах", о "месте носителей фамилий на ян", о конфликтности армянской миграции, никак не получили должной оценки со стороны армянских ОО, и были нейтрализованы лишь после указаний сверху, приобрета после этого

более мягкую окраску. Также неуместно выглядят частые заверения лидеров армянских ОО в преданности государству на фоне прямой и косвенной дискриминации национальных институтов, по

ных учреждений.

В Краснодарском крае издается ряд печатных СМИ, о которых говорилось выше. Все они, если взять за основу тематический метод исчисления информации К. Иствуда⁴¹, относятся к малодоступным средствам, которые приобретаются эпизодически и не носят характера массового спроса. При этом, согласно тому же методу, коэффициент их информативности равен 0,23 (тираж, периодичность и объем деленные на количество потенциальных потребителей), что относит их к низкоинформативным СМИ. Для примера коэффициент информативности казачьих СМИ составляет 1,642. В крае пока отсутствуют и самые массовые СМИ - национальные радио и телевидение. Следует оговориться, что мы говорим о массово доступных и потребляемых СМИ, адаптированных к конкретным условиям диаспоры Краснодарского края, не учитывая Интернет, спутникового телевидения и т.д., которые имеют ограниченный индивидуальный спрос.



Армянская церковь в Адлере.

сравнению, например, с казачьими или адыгейскими, не говоря уже о бытовой дискриминации или нарушении прав человека по культурной и расовой принадлежности³⁹.

Этот вывод подтверждают другие факты, которые приводятся ниже.

В Краснодарском крае из 274 566 армян согласно переписи 2002 г. лишь 211 849 владели армянским языком⁴⁰. Среди них почти половина владеет только диалектом армянского языка, особенно этот фактор распространен среди старожильческих групп армян. Такое положение сводит к минимуму их вовлечение в сферу армянской культуры и интеграции в общепармянскую общность при отсутствии доступных и достаточных информационных и образователь-

ных соответствия содержания форме остаются за рамками таких данных. В г. Сочи согласно переписи 2002 г. проживает более 15 тыс. детей армян в возрасте от 7 до 17 лет, тогда как в армянской школе и отделениях училось всего на тот же период всего около 1380 учащихся, то есть 9%⁴³. При этом, в адлерской армянской школе в последние 3 года отсутствовало преподавание уроков истории армянского народа, а армянская ли-



Армянская школа в Адлере.

тература преподается факультативно. В 2005-2008 гг. значительному сокращению и закрытию подверглись армянские отделения в Черешне, Примерном и Молдовке⁴⁴. В других регионах намного меньшее количество посещают только воскресные занятия.

К сожалению, не были получены сведения о количестве прихожан в приходах ААЦ в крае и о составе творческих коллективов армян края. Об их положении можно судить по косвенным данным. Согласно проведенному опросу из 350 человек лишь 23 (7%) регулярно или эпизодически посещают армянские церкви, остальные ограничиваются только крещением⁴⁵. Во многих населенных пунктах, где проживают 1000 и более армян, нет приходов ААЦ. В деятельности армянских творческих коллективов принимает участие от 500 до 1000 армян, в основном они сосредоточены в г.г. Сочи и Краснодар⁴⁶.

Вывод, который можно сделать из представленных тезисов, таков. Армяне Краснодарского края неоднородная общность, различающаяся по социально-культурным особенностям, слабо мобилизованная в русле общепармянского движения и разно-вовлеченная в сферу бытования, распространения и влияния общепармянских институтов.

Источники:

1. "Итоги всероссийской переписи населения 2002 г. по Краснодарскому краю". Т. 4, с. 7-11. Краснодар, 2005.
2. Корякин К. В. Социальные и культурные аспекты адаптации мигрантов-армян в Краснодарском крае (1988-2006)., с. 44-49. М., 2007;
3. там же, с. 44-59;
4. там же, с. 94-96.
5. там же, с. 96-98; w. mashtots.ru/история;
6. Корякин..., с. 134-137;
7. w. viparmenia.com/черкесогаи;
8. w. mashtots.ru; w. ru. wikipedia.org/амшенские армяне;
9. w. mashtots.ru/история;
10. Корякин..., с. 44-59, 93-128; w. mashtots.ru/история; w. iea.ras.ru/армяне;
11. там же;
12. там же;
13. там же;
14. w. mashtots.ru/архив
15. w. golos.am./ Севан;
16. w. forum.vardanank.org./цанк;
17. w.hayinfo.ru; w.yerkramas.org; w.miasin.ru/хачкар;
18. w.yerkramas.org/грант маркарян;
19. w.yerkramas.org; w.noev-kovcheg.ru/армянская церковь;
20. w.forum.vardanank.org; w.portal-kredo.ru/армяне католики;
21. "Амшенская библиотека", с. 4-12. Краснодар, 2004;
22. w.azg.am; w.yerkramas.org/лазаревский центр;
23. w. mashtots.ru; w.hayinfo.ru/пашковская община;
24. w.dzaynhamshenakan.org;
25. w.yerkramas.org;
26. w.hayinfo.ru; w.yerkramas.org; w.miasin.ru/хачкар;
27. w.ru.hayazg.info/луйс;
28. w. mashtots.ru;
29. w. mashtots.ru/книги;
30. w.aniv.ru;
31. w.noev-kovcheg.ru;
32. w.dzaynhamshenakan.org;
33. w.noev-kovcheg.ru/армянские школы;
34. w. mashtots.ru/собрание;
35. там же;
36. Опрос респондентов армян..., архив автора, ол. 1, в. 4;
37. Опрос респондентов армян..., архив автора, ол. 1, в. 6;
38. w.yerkramas.org/митинг,геноцид;
39. Корякин..., с. 185-215;
40. "Итоги всероссийской переписи населения 2002 г. по Краснодарскому краю". Т. 4, с. 223-224. Краснодар, 2005.
41. w.pressalit.ru/иствуд;
42. подсчет выполнен автором согласно газетному каталогу "Пресса России 2008", М, 2008;
43. "Итоги всероссийской переписи населения 2002 г. по Краснодарскому краю". Т. 4, с. 225-230. Краснодар, 2005.
44. w.yerkramas.org; w.noev-kovcheg.ru/ молдовка;
45. Опрос..., ол.1, в. 8;
46. Опрос..., ол.2, в. 12.

Հրեանց ծննդավայրն ու անունները փոխելուց հետո մեծ քաղաքներ եկած ծայտայալ հայերը շատ ներգործուն են բյուրոկրատիայի ամենաստրատեգիական կետերում, ինչպես նաև՝ արվեստի և ԶԼՄ-ների աշխարհում»²¹:

Այն, որ Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի ողջ տարածքում կան հայեր, որոնք Ցեղասպանությունից փրկվածների սերունդներն են, հասկանալի է և օրինազափ: Նրանց թիվը էլ հարցի մեջ այլ կողմն է. ես հավանում եմ այն կարծիքին, որ այդ թիվը գոնե կրկնակի շատ է (բացահայտ քրիստոնյա և հայախոս հայեր, Ցեղասպանության ժամանակ և դրանից հետո իսլամացած հայեր, ծախալ հայեր, շատ ավելի վաղ իսլամացած համաշխարհային և այլն)²²: Բայց այստեղ հետաքրքիրն այն է, որ թուրքական ազգայնամուլ մանուկն ու քաղաքական-մտավորական շրջանակները այդ թիվը մեծացնում են աստիճանաբար՝ ըստ հակահայ քարոզչության քաղաքական նպատակահարմարության:

Երբ տարբեր երկրներ իրար ետևից սկսեցին ճանաչել Հայոց Ցեղասպանության փաստը, որոշ թուրք պատմաբաններ գոհերի թիվը փոքրացնելու համար սկսեցին փրկվածների ավելի մեծ թվեր ներկայացնել: Այսօր դրան ավելացել է մեկ այլ քաղաքական պատվեր. ամեն կերպ փաստել, ապացուցել, որ հայերը Թուրքիայի ամբողջականությանն ու պետության անվտանգությանը սպառնացող ուժ են. վտանգի չափը մեծացնելու համար հարկավոր է շրջանառության մեջ դնել ավելի մեծ թիվ՝ մեկ և կես միլիոն. «Մեր երկրում գոյություն ունի ուժեղ և ազդեցիկ մի հատված, որին անվանում ենք «կրիպտո օտարերկրացի»: Սրանք թուրք-մահմեդականի պատյանի մեջ պարուրված, իրենց իրական ինքնությունը թաքցնող, աստվածաբան ասպրող, կարևոր պաշտոններ գրավելով՝ մեր ազգի զավակների համար դեպի պաշտոններ տանող ճանապարհի փակող անձինք են: Օպորտյուն օտարերկրացիների մի կարևոր հատվածն էլ կազմում են հայերը: Եթե անգամ ոչ սաբաթայականների չափ, այնուամենայնիվ կրիպտո հայերը շատ ազդեցիկ են Թուրքիայում: Իրենց նախնի կին անտյանները հանդիսացող սաբաթայականների հետ համերաշխ են սև թուրքերի հարցում: Այսօր բանակից մինչև դատական համակարգ, արվեստներից մինչև քաղաքական դաշտ՝ ամենուր, իրենց գիտակցությունն ու աստվածությունը պահպանող բազմաթիվ ծայտայալ հայեր կան: Կառույցներից մեկն էլ, որում բավականին մեծ թիվ են կազմում կրիպտո հայերը, մեր ազգի զվխին մուֆ խաղեր խաղացող, սադրանքներով մեր մարդկանց իրար դեմ հանել ձգտող, ամեն տեսակի հանցագործություն կատարող երգեցեքոն ահաբեկչական կազմակերպությունն է»²³:

Հայերից եկող վտանգն այնքան մեծ է, որ «մոռացության» է տրվում անգամ քրդական վտանգը: Ավելին՝ պարզվում է, որ քրդերը ժողովուրդը նույնպես վտանգված է. «Իսկապես ասած՝ քրդերը, որպես այս ազգի զավակներ, քրդականությունը չեն արել անգամ պետության ղեկավար շրջանակներում: Միայն հայ կամ այլ ազգության պատկանող դրոններն են շահարկում ու չարաշահում քրդերին: ...Նրանց գործողությունները տանում են մասնատման և տարրալուծման»²⁴:

Իսկ որոշներն էլ պատասխանում են «...այն ժամանակվան, երբ զարթոնք կապրեն միմյանց դեմ թշնամացված ու իրահրված (հայ կամ

այլ ազգության պատկանող դրոնների կողմից- Հ. Ա.) քրդերը և թուրքերը...»²⁵:



Քաղաքացիական

Երևում է՝ 1915-23թթ. քրդերի ծեղրով հայերին կոտորելու քաղաքականությունը կարոտախոս է ծնել ֆաշիստական ուղեղներում, որոնք դեռևս մի քանի տարի առաջ հայ օժեցին Օջալանին ու նրա բազմաթիվ զինակիցներին: Երբ այս տարբերակը չուվեց ցանկալի արդյունքը, քանի որ բազմամիլիոն թուրք ժողովրդի պայքարը որպես հայկական զաղտնի դավադրություն ներկայացնելը այնքան էլ համոզիչ չէր հնչում, ի թիվս վերոնշյալ դավադրական ծրարների՝ ասպարեզ նետվեց երգեցեքոնի հայ-իրեական ծագման վարկածը: «Չի երևում, թե հայերը երգեցեքոնի ուղեղն են ներկայացնում, սակայն, եթե հայացք ենք նետում գործ անողներին, սադրանքներ հրահրողներին, բացահայտվում է, որ դրանք հիմնականում բոլորն էլ (կրիպտո) հայերն են: Խորքային գործերում հայերը օպերատորներն ու կատարողներն են, իսկ հայերից ավելի սպիտակ եղող իրենները և սաբաթայականները նկատվում են որպես որոշումներ կայացնողներ... Այսօր ռազմավարական նշանակություն ունեցող կետերում բազմաթիվ ծայտայալ հայեր ու սաբաթայականներ կան»:

Երգեցեքոնի պարագլուխներից Վելի Քյուչյուքը հայ է. «...քանի որ նրա համախոհների տված ցուցումներում մշվել է, որ Վելի Քյուչյուքը հայերն է խոսում իր մայրենի լեզվի պես, ապա հարց է ծագում. Երգեցեքոնի գործունե տեղ գտած Վելի Քյուչյուքը որտեղի՞ց և ինչպե՞ս է սովորել հայերեն»: Պարզվում է՝ սա խիստ մուֆ անցյալ ունի. պետական պաշտոնի եղած շրջանում իր հրամաններով հազարավոր թուրքեր ու քրդեր են իրար սպանել. «Վելի Քյուչյուքը հմտորեն օգտվել է բոլոր միջոցներից, որպեսզի տվյալ շրջանի մարդկանց թշնամի դարձնի թուրքին ու թուրքական պետությանը, այն էլ՝ համուն «պետության» և «թուրքականության»... «Հայեր են բոլոր այն ռեկտորները, ովքեր երգեցեքոնի կազմակերպության «միջամտող» շրջապատ ստեղծելու համար շիկացնում են մթնոլորտը»: «Հորական տատի կողմից հայկական ծագում ունեցող Գյոքթաշի մորական կողմն էլ եղել է (Քարաբյուք մահանգի) Սաֆրանբուլու գավառի Քարան գյուղից: «Եթե կանխապես, քննենք երգեցեքոն կազմակերպության մեկ այլ կարևոր դերակատարի: Իսկ ո՞վ է Բանվորա-

կան կուսակցության առաջնորդը եղած, Ափոյին ծաղիկ մեկնած, բազմաթիվ սադրիչ իրադարձությունների պարտադիր կերպով մասնակցած, պրովոկացիոն հողվածների հեղինակ, մաոյիզմի և Չինաստանի կողմնակիցը լինելով հանդերձ Ռուսաստանի, Ալեքսանդր Դուզինի հետ գործ բռնած, բայց իրականում, ըստ տեղեկությունների, Անգլիայի շահերին ծառայող, վերջին շրջանում պանթուրքիստ-ազգայնամուլ-ռազմապաշտ դարձած, այս պահին երգեցեքոնի գործով ձերբակալված Դոդու Փերինչեքը: Դոդու Փերինչեքի ընտանիքը ծագում է Երզնի-Ջաննազի Էղին (Քեմալիյե) գավառի Ափչաղա գյուղից»: Պարզվում է՝ այդ գյուղի բնակիչ բոլոր Փերինչեքները արիսիվային վավերագրերով հայեր են՝ Դոդու Փերինչեքի նախնիները:

Եւ որպեսզի ոչ մի կասկած չհարուցի ասվածը, հարկավոր է, որ այն ցնցող հայտնագործություն լինի, մանավանդ որ դրան հավատարու ոչ մի բարոյախոգե-



Օզբայ Վուրալ

բանական խոչընդոտ չկա. «Իր երկրին հավատարիմ, հայկական սպիտակից հետ խնդիրներ ունեցող, բացահայտ հայ Հրաման Դինքի սպանությունը մտահոգացած՝ Էլազիգի Քարաբյուք գավառից Էրհան Թունջելիի արմատները



Դոդու Փերինչեք

նույնպես հայկական են: Ինչպես երևում է՝ որպես ամենաազգայնական, ամենաազգայնամուլ հանդես եկող երգեցեքոնիցիները ծագումով ոչ թուրք են, ոչ էլ մահմեդական»²⁶:

Նման քարոզչության դեմ հանդես եկող մի շարք թուրք մտավորականներ ու գրողներ կան ստիպված հեռացել են երկրից, կամ բանտերում են: Նույն ճակատագիրն է սպասում նրանց, որոնք դեռևս ազատության մեջ են և հանդաված են, որ Թուրքիայում կարելի է կառուցել «Մի նոր աշխարհ ոչ մահմեդականների հետ»²⁷:

Հաշվի առնելով թուրք հասարակության մեջ տիրող բարոյախոգեբանական մթնոլորտը, թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը և Օսմանյան կայսրությունից ժառանգություն մնացած ցեղապաշտական-պանթուրքիստական տեսականը՝ ավելի հավանական է, որ Թուրքիայում դեռ շատ երկար պրապետող դիրքեր կունենան այն ուժերը, որոնք երկրում ստեղծված իրավիճակի վերլուծություն-

նից հանգել են հետևյալ եզրակացությանը. «Հասել է ժամանակը, որպեսզի մեր երկրին, քաղաքակրթությանը և ազնվական ժողովրդին ուղղված թշնամական նախագծի, ծրագրի, սցենարի ու գործողությունների, օրինական կամ անօրինական կողմ հանդիսացող բոլոր միությունների, կազմակերպությունների, պետությունների և կառավարությունների դեմ «բացահայտ դիրք» բռնենք և նման ու փոխադարձ քաղաքականության հետևենք»²⁸:

Իսկ այդ «թշնամական նախագծի, ծրագրի, սցենարի ու գործողությունների» հեղինակների ու դերակատարների մեջ ըստ առավել տարածված տեսակետի Հայաստանն ու հայությունը առաջիններից են. «Ովքե՞ր են ցանկանում Թուրքիայի մասնատումն ու կործանումը: Հայաստանն է ուզում, սփյուռքահայերն են ուզում: Երբեք մի գայթակղվեք ու խաբվեք նրանով, որ մեր նախագահը Ֆուտուլային խաղը դիտելու նպատակով այցելեց Երևան: Հայերը մեզանից հող են պահանջում, փոխհատուցում են պահանջում, կրկին Թուրքիայում ապրելու թույլտվություն են ուզում: Նրանք ևս չեն ցանկանում, որ Թուրքիան հզոր լինի: Ուզում են, որ Թուրքիան մասնատվի, որ իրենց ձգտումներն իրականանան»²⁹:

Նման քարոզչության արդյունքները արտացոլվում են Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության 2009թ կատարած հարցախույզի տվյալներում. «Թուրքիոյ թշնամի նկատուող երկիրներում մեջ Միացեալ Նահանգներ կը գրաւ պարագլուխի դիրքը (25.4 առ հարիւր), Իսրայէլ (15.6 առ հարիւր), Ֆրանսա (12 առ հարիւր), Հայաստան (10.3 առ հարիւր), Յունաստան (7 առ հարիւր), Ռուսիա (6.4 առ հարիւր) եւ Քերմանիա (1.8 առ հարիւր): Ըստ 2005ին կատարուած հարցախույզի արդիւնքներուն, մասնակիցներուն 6 առ հարիւրը Հայաստանը թշնամի երկիր կը նկատէր, իսկ 2.8 առ հարիւրը Ռուսիան: Հարցախույզը կատարուած է Պոլսոյ, Անգարայի, Իզմիրի եւ Պոլսոյ մէջ»³⁰:

Եթե այսպիսի քաղաքներում, ուր գտնվում են մտավորական կենտրոնները, առավել ազատա-



Վելի Քուչյուք

կան կամ ժողովրդավարական հաստատություններն ու լրատվամիջոցները, Հայաստանը թշնամի համարողների թիվը 5 տարում գրեթե կրկնապատկվել է, ապա Կեսարիայում կատարված ստորագրահավաքի մասնակիցների թիվը՝ 250.000, որը բնակչության 50 տոկոսն է, ներկայացնում է

առավել իրական պատկերը ամբողջ Թուրքիայի հաշվարկով: Իսկ մինչ այդ «բացահայտ դիրքի» կողմնակիցներն այսօր Ստամբուլի (հնարավոր է՝ նաև այլ քաղաքների) քրիստոնյաների և, հատկապես, հայերի տների վրա խաչի նշաններ են գծում³¹, ճիշտ այնպես, ինչպես Օսմանյան կայսրությունում «գտնումների» նախօրյակին, ինչպես հանրապետական Թուրքիայում՝ 1956թ. սեպտեմբերյան ջարդերից առաջ...

Ծանոթագրություններ

* Բացի թիվ 1 հոդվածից՝ բոլոր թարգմանությունները թուրքերենից կատարել է ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՍՅԱՆԸ:

- 1. Մեջբերումը՝ ըստ Ռուբեն Մելքոնյանի «Ազգայնամուլության նոր դրսևորումներ Թուրքիայում» հոդվածից, www.noravank.am
- 2. www.baskinoran.com, տե՛ս նաև «Ալլոսի» 2009թ. մայիսի 29-ի համարը:
- 3. Նույն տեղում:
- 4. http://bianet.org/bianet/siyaset/112236-ders-kitaplari-insan-haklari-ihalleriyle-dolu
- 5. Radikal օրաթերթ, 08.02.2009:
- 6. http://www.bianet.org 16.3.2009:
- 7. Ալլոս շաբաթաթերթ, 05.06.09
- 8. Հայ Դատն այսօր, Թեհրան, 2005, էջ 46: Նաև՝ http://www.milligazete.com.tr/index.php?action=s how&type=writersnews&id=17302
- 9. Թուրքիայում խոսվող լեզուների և աշխարհի բոլոր լեզուներին նվիրված մի համապարփակ ուսումնասիրություն հրապարակված www.ethnologue.com-ի՝ Թուրքիայի մասին զեկուցման համաձայն՝ Թուրքիայում խոսվում է 36 լեզու՝ թուրքերենը ներառյալ:
- 10. Milliyet օրաթերթ, 13.03.2009:
- 11. Radikal օրաթերթ, 24.05.2009:
- 12. Milliyet օրաթերթ, 15.05.09:
- 13. Taraf շաբաթաթերթ, 25.05.2009:
- 14. Radikal օրաթերթ, 26.05.09:
- 15. Մեհմեդ Շեքեր Էյզի Միլլի գազեթե 31.07.2009 http://www.milligazete.com.tr/makale/muslumanlarin-birlesmesi-134155.htm
- 16. http://www.sagduyu.de/blog/?p=251
- 17. Յուսուֆ Գեզզին http://www.sagduyu.de/blog/?p=25118.1 1.2008
- 18. Էրզուլն Բաբահան, Star օրաթերթ, 06.06.2009
- 19. Էրզուլն Բաբահան, Star օրաթերթ, 06.06.2009:
- 20. Յուսուֆ Գեզզին http://www.sagduyu.de/blog/?p=251
- 21. Նույն տեղում:
- 22. ԴՐՕՇԱԿ, 2009, թիվ 1, էջ 33-38:
- 23. Յուսուֆ Գեզզին http://www.aktifhaber.com
- 24. Մեյֆի Շահին http://www.ortadoguzgazetesi.net/makale.php?id=4433
- 25. http://www.aktifhaber.com 03.08.2009:
- 26. Յուսուֆ Գեզզին http://www.aktifhaber.com 03.08.2009:
- 27. Ալի Բուլաչ, Zaman օրաթերթ, 20.07.2009:
- 28. Մուստաֆա Նեվրուզ Արնաջը http://www.anayurtgazetesi.com.tr/default.asp?page=yazar&id=1350
- 29. Մեհմեդ Շեքեր Էյզի, «Միլլի գազեթե» Bu haber 398 defa okundu. Kaynak: www.mehmetsevketeygi.com
- 30. www.mehmetsevketeygi.com/haberergoster.asp?id=7516 ?ub 2009
- 31. Ասպարեզ, 25 օգոստոսի 2009
- 32. Ասպարեզ, 19 օգոստոսի 2009, Մարմարա, 19 օգոստոսի, 2009:



ՀԱՄԱԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԶԵՆԱՐԿՈՒՄ

AMSHEN – POHTOS

Материалы к историко-культурно-лингвистическому словарю поинтаских армян

Центр «Амшен»

Вопросы культуры, логики, армян, Понта

Таибур-Амашен-Амшен

Амшенско-армянский музыкальный инструмент

Первая Гунайка

Арташ и арташцы

«Հայ-ռուսական համագործակցություն» և «Կրասնոդարի երկրամասային «Համշեն» հայկական գիտական լրատվական-մշակութային կենտրոն» հասարակական կազմակերպությունները վերջերս Կրասնոդարում հրատարակել են «Համշեն-Պոնտոս» ռուսերեն ժողովածուի առաջին թողարկումը (համարը): Այն տպագրվել է Դոնի Ռոստովում, 103 էջ ծավալով և 300 տպաքանակով: Պատասխանատու խմբագիրն է Մ. Թաթևյանը, խմբագրական խորհրդի անդամներն են Ա. Թուրմուզյանը և Ս. Վարդանյանը:

Ժողովածուն ընդգրկում է Երևանից, Արևելից, Տուրքիայից և Ապազերիայից վեց հեղինակի 11 հոդված, որի մի մասը նախկինում լույս է տեսել մամուլում՝ այդ թվում «Չայն համշենական» ամսաթերթում:

Ներկայացնենք «Համշեն-Պոնտոսի» բովանդակությունը՝ Թաթևյան Մ. (Տուրքիա), Համշենագիտության մի քանի խնդիրներ: Նույնի՝ «Համշեն» և «Համշենցիներ»: Նույնի՝ Պոնտոսի հայերի մշակութաբանության հարցեր: Թուրմուզյան Ա. (Ապազերիա), Կրասնոդարի երկրամասային «Համշեն» հայկական գիտական լրատվական-մշակութային կենտրոնի հասարակական կազմակերպությունը: Գործունեության հաշվետվություն: Նույնի՝ Համշենցի հայերի անցյալը և ներկայիս: Եղիազարյան Ա. (Երևան), Համամշեն-Համշենի հիմնադրության պատմության մասին: Նույնի՝ Տամբուր-Համամշեն-Համշենի, Արտաշենի և Համշենի իշխանության մյուս բնակավայրերի տեղադրության մասին: Նույնի՝ Համամշեն-Համշենի իշխանությունը հայ Բագրատունիների ժամանակաշրջանում: Ջեթևյան Ա. (Արևելի), Համշեն-հայկական երաժշտական գործիքները: Սուլիմ Ա. (Տուրքիա), Առաջին Համամշենի և Արդվիհները:

Ինչպես հոդվածների վերնագրերն իսկ վկայում են, ընթերցողի սեղանին է դրվել լուրջ, գիտական ժողովածու և մեզ մնում է շնորհակալություն հայտնել հրատարակիչներին, նրանց մտքով ամենայն բարիք, գիտական բեղուն գործունեություն և հուսալ, որ հաջորդ թողարկումները սպասեցնել չեն սոս:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1900-1920 թթ.)

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1993թ. N 3-ից (էջ 199-201) արտատպելով Վ. Մաղալյանի հոդվածը, մենք հույս ունենք, որ նրանում նշված թերթերի որոշ օրինակներ, այնուամենայնիվ, պահպանվել են, ուստի դիմում ենք մեր ընթերցողներին, խնդրելով որևէ տեղեկություն ունենալու դեպքում հայտնել «Չայն համշենականի» խմբագրություն:

Վ. Ս. Մաղալյան Բանասիրական գիտությունների թեկնածու

Սախախորհրդային շրջանում հայ գավառական մամուլի և գրատպության նկատելի օջախեր են եղել Աջարիայի և Աբխազիայի կենտրոններ Բաթումը և Սուխումը: Սևծովյան ավազանի հայաշատ այդ քաղաքներում ևս մեր դարասկզբին հիմնադրվում են հայկական տպարաններ, որոնցում տպագրվում են հայերեն գրքեր, թերթեր և այլ նյութեր:

Բաթումում նախախորհրդային շրջանում գործել է հայկական երկու տպարան, որոնցից առաջինը հիմնադրվել է երկու դարերի սահմանագծում՝ Ն. Գուրոկյանի կողմից: Վկայություններ կան, որ այդ տպարանում, 1901-04թթ., մի շարք գրքերի հետ միասին՝ հրատարակվել է նաև հայերեն մի թերթ, որը մինչև այժմ մնում է անհայտ. նրանից չի պահպանվել ոչ մի օրինակ: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ այն լուսաբանել է Բաթումի նավահանգստային բորսայում աշխատող հայ գաղթական մշակների կյանքը, տպագրվել են լուրեր, թղթակցություններ ու առանձին հոդվածներ Արևմտյան Հայաստանի անցուդարից, Սև ծովի կովկասյան ափերի իրադարձություններից, ինչպես նաև արտասովորություններ են կատարվել տարբեր թերթերի էջերից:

Մեկ այլ թերթ տպագրվել է այդ տպարանում, թե՛ ոչ, մեզ հայտնի չէ: Միայն գիտենք, որ Ն. Գուրոկյանի տպարանը փակվել է 1905-07 թթ. ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո՝ ստոլիպինյան ռեֆորմների շրջանում:

Բաթումի երկրորդ հայկական տպարանը հիմնադրվել է 1917 թ. մի խումբ հայ բուլշևիկների կողմից: Այդ տպարանում, Հ. Հակոբյանի, Ս. Խանոյանի, Ա. Սարուխանյանի, Ա. Ջուրաբյանի և Գ. Գրիգորյանի նախաձեռնությամբ, 1917-18 թթ. տպագրվում է «Բանվոր և զինվոր» հայերեն թերթը: Չ. Տ. Գեգեշիձեն իր՝ Վրաստանի բուլշևիկյան կազմակերպությունների գաղտնի տպարանների պատմությանը նվիրված գրքում գրում է. «1917 թվականին, այլ բուլշևիկյան թերթերի հետ միասին, Բաթումում լույս է տեսնում նաև բուլշևիկյան «Բանվոր և Ձինվոր» հայերեն թերթը», որը, սակայն, մեզ չի հասել: Նույն հեղի-

նակի վկայությամբ՝ այդ տարիներին բուլշևիկյան թերթերը, որոնք տարածվում էին գաղտնի կերպով, ընկնելով ոստիկանության ձեռքը, ամբողջական տպագրանակներով ոչնչացվում էին: Ըստ երևույթի «Բանվոր և Ձինվոր» թերթն էլ արժանացել է այդ բախտին: Հայտնի չէ, թե այս թերթը մինչև երբ է հրատարակվել և քանի համար է ունեցել:

Աբխազիայի մայրաքաղաք Սուխումում ևս մեր դարասկզբին աշխուժություն է ապրում հայ մշակութային կյանքը: Այստեղ 1911 թ. ստեղծվում է դպրոցական խորհուրդ, որը ղեկավարում էր ճանաչված մտավորական, ուսուցիչ Խաչատուր Ավդալբեգյանը: Նա էլ Սուխումում այդ ժամանակ բացում է գրախանութ, ստեղծում է հայկական տպարան, որտեղ տպագրվում են հայերեն թերթեր:

Սիսա թե այդ մասին ինչ է գրում աբխազահայ ճանաչված գրող ու մշակութային գործիչ Արշավիր Ջիդարյանը. «Սուխումում հայկական տպարան հիմնեց Խաչատուր Ավդալբեգյանը, որը Երևանից 1909 թե 1910 թվականին եկավ Սուխում: Մեկ թե երկու տարի աշխատեց Մերխուլի գյուղում որպես ուսուցիչ, հետո տեղափոխվեց Սուխում, այնտեղ հիմնեց հայ գրքերի գրախանութ (քաղաքի կենտրոնում), իսկ նրա բակում՝ հայկական տպարան և այն անվանեց «Պոնտոս»: Ես շատ անգամներ եմ եղել այդ գրախանութում... Ե մի քանի անգամ բակից մայել եմ այդ տպարանին»:

Հիշյալ տպարանում 1912-ին սկսում է տպագրվել աբխազահայ առաջին պարբերականը՝ «Լույս» գրական-ժողովրդական շաբաթաթերթը, որը, փաստորեն, տեղի ևս թագային խորհրդի գործադիր մարմնի օրգանն էր: Նրա հրատարակությունը 1913 թ. ևս շարունակվել է: Ըստ երևույթի այս թերթը խմբագրել է նույն խորհրդի անդամ Խ. Ավդալբեգյանը:

Բացի սրանից՝ նախախորհրդային շրջանում Սուխումում տպագրվել են նաև այլ թերթեր: Դրանց մասին իր հուշերում դարձյալ հետաքրքիր փաստեր է բերում Ա. Ջիդարյանը. «Այդ տպարանում, գրում է նա, մինչև խորհրդային կարգեր հաստատվելը տպագրվել են մի շարք թերթեր: Ես անձամբ տեսել եմ 1917-1921 թվականներին, թե ինչպես իմ այրի հորաքոջ երկու տղաները՝ Բաբկեն և Գնել Սամվելյանները, հայերեն թերթեր վաճառում էին քաղաքում: Թե ինչպես էին կոչվում այդ թերթերը, չեմ կարող ասել: Բայց լսել եմ, որ եղել է երկու թերթ, մեկը կոչվել է «Բանվորի գործ», իսկ երկրորդը՝ երկրի «Լույս»: Անշուշտ, այդ թերթերը տպագրվում էին առիթից առիթ»:

Ա. Ջիդարյանը ճիշտ է, երբ գրում է, որ այդ տարիներ Սուխումում հրատարակվում էին հայերեն թերթեր: Սակայն նա 70 տարիների վաղեմություն ունեցող իրադարձություններն ու փաստերը խառնում է իրար: Այդ շրջանում այնտեղ տպագրվել են «Նոր

կյանք» (1918) և «Փարոս» (1919) քաղաքական-հասարակական թերթերը, որոնք ունեցել են սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան) ուղղություն: Իսկ ինչ վերաբերում է նրա նշած «Բանվորի գործ» թերթին, ապա, մեզ թվում է, հեղինակն այն շփոթում է «Կարմիր աստղ» բուլշևիկյան թերթի հետ, որը նույնպես տպագրվել է Սուխումում, 1920-ին, մենշևիկյան տիրապետության օրոք: Այս թերթը, որոշ մատենագետների վկայությամբ, խորհրդային շրջանում ևս շարունակել է իր գոյությունը և լույս է տեսել մինչև 1923 թվականը:

Հիմնականում սրանք են նախախորհրդային շրջանում Սև ծովի կովկասյան ափերին՝ Աջարիայի ու Աբխազիայի կենտրոններ Բաթումում ու Սուխումում տպագրված հայերեն թերթերը: Սակայն, ցավոք, Անդրկովկասի, ինչպես նաև Ռուսաստանի պետական գրադարաններում ու արխիվներում այս թերթերը չեն պահպանվել, մինչև այսօր գոնե դրանցից ոչ մի օրինակ չի հայտնաբերվել: Մեր որոնումները ևս այդ ուղղությամբ անցել են ապարդյուն: Ուստի մենք չենք կարողացել տալ այդ թերթերի վերլուծությունը: Դրանց վերաբերյալ տեղեկությունները քաղել ենք հրապարակի վրա եղած մատենագիտական հրատարակություններից, առանձին մենագրություններից ու այլ աղբյուրներից:

Սակայն որոնումները պետք է շարունակվեն, քանի որ վերոհիշյալ թերթերի թեկուզև առանձին համարներն էլ հայտնաբերումը և դրանց վերլուծությունը նոր լույս կսփռեն շատ հարցերի վրա և կնպաստեն մեր դարի առաջին քառորդում Աջարիայի ու Աբխազիայի հայության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի լուսաբանմանը:

Այսպիսով՝ Աջարիայում և Աբխազիայում մեր դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում հրատարակված գավառային այդ թերթերի երևան գալը կարելի է դիտել որպես հասարակական-քաղաքական ու մշակութային կարևոր երևույթ տեղի հայ ազգաբնակչության կյանքում: Այդ թերթերը, անկախ իրենց կուսակցական պատկանելիությունից ու ուղղությունից, պետք է ենթադրել, որ լուրջ դեր են կատարել ազգային կյանքն աշխուժացնելու, քաղաքական և մտավոր ուժերը համախմբելու գործում: Կարելի է ենթադրել նաև, որ այդ պարբերականները եղե՞նք մագապուրծ՝ Սև ծովի արևելյան ափերին ապաստանած համշենահայության բեկորներն իրար հետ շաղկապելու և նրանց ոգին ու ազգային արժանապատվությունը բարձր պահելու մի միջոց են հանդիսացել, նրանց հավաքական գործունեությունը և բարոյական կենսունակությունը պահող կարևոր գործոն: Մեր կարծիքով հիմնականում այս պետք է եղած լինի այդ մամուլի առաքելությունը:

1. Տե՛ս Թեոդիկ, Տիպ ու Տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 185:
2. Մեր դարակազմի Բաթումում լույս տեսած այս թերթի մասին ոչ մի հիշատակություն չկա մեր մատենագիտական հրատարակություններում:
3. Այս թերթի մասին տվյալները մենք քաղել ենք աջարահայ մշակութային կյանքի քաջագիտակ, «Էջեր Բաթումի հայ թատրոնի պատմությունից» (Երևան, 1961) մենագրության և այլ արժեքավոր գրքերի հեղինակ, քատրագետ ու բանաստեղծ Գևորգ Դարիբյանի (1927-1992թթ.) անձնական արխիվից:
4. Չ. Տ. Գեգեշիձե, Վրաստանի բուլշևիկյան կազմակերպությունների անկեղծ տպարանները (1900-1920), վրացերեն, Թբիլիսի, 1968, էջ 242: Այդ թերթի մասին տե՛ս նաև՝ «Очерки истории коммунистической партии Грузии», в 3-х частях (1883-1981), часть первая: «В борьбе за победу социалистической революции (1883-1921)», Тбилиси, 1982, էջ 283:
5. Ա. Ջիդարյանի (1906-1989) հուշերի ձեռագիրը՝ գրված 1983 թ. հոկտեմբերի 3-ին, հեղինակը տրամադրել է մեզ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: 6. «Լույս» ունեթ խմբագրական մարմին: Ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 35x28 սմ.: Տպաքանակը չի նշված:
7. Ա. Ջիդարյան, նշված հուշերը:
8. «Նոր կյանք» ունեցել է խմբագրական խորհուրդ: Ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 46x31 սմ.: «Փարոս» նույնպես ունեցել է 4 էջ ծավալ, չափսը՝ 42x31 սմ.: Երկուսի տպաքանակներն էլ չեն նշված:
9. Գ. Լևոնյանի կազմած «Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), առաջաբանով, ներածությամբ և աղյուսակներով» (Երևան, 1934) գրքում (տե՛ս էջ 108, հ. 960) գտնվում ենք, որ հիշյալ թերթը ունեցել է բուլշևիկյան ուղղություն, Սուխումում հրատարակվել է 1920-ին, ստորագրված է «խմբագրական կուլեգիա», ծավալը՝ 4 էջ, չափսը՝ 41x31 սմ.: Մեզ թվում է՝ այս թերթի վերաբերյալ Գ. Լևոնյանի բերած այս տեղեկություններն ավելի ստույգ են ու հավաստի: Սակայն, հակառակ դրան, Ա. Կիրակոսյանն իր «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1987)» համահավաք ցանկում (Երևան, 1967) նշում է, որ «Կարմիր աստղը» տպագրվել է 1920-1923 թթ. և եղել է Վրաստանի կոմունիստական (բուլշևիկյան) կուսակցության օրգանը (տե՛ս էջ 100, հ. 530): Այս տեղեկությունները նույնությամբ անցել են նաև Ա. Բաբլոյանի կազմած «Հայ պարբերական մամուլը (1794-1980)» (Երևան, 1986) մատենագիտական համահավաք ցուցակի մեջ (տե՛ս էջ 133, հ. 1138), որոնք, մեր կարծիքով, հեղինակը շփոթել է Թիֆլիսում 1920թ. դեկտեմբերի 15-ից լույս տեսած «Կարմիր աստղի» տեղեկությունների հետ, որն, իրոք, եղել է Վրաստանի հեղկոմի, իսկ այնուհետև՝ 1921թ. մարտի 5-ից՝ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի օրգանը և հրատարակվել է մինչև 1923 թ. փետրվարի 20-ը: Փետրվարի 25-ից նրան փոխարինել է Ռուսաստանի կոմկուսի Անդրերկրյան օրգան «Սարտակոջ» (1923-1927) թերթը:

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄԱԵՆ» հայրենակցական-քաղաքական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03U054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը «Չայն համշենականի» պարտադիր է: Հրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org